ՀՏԴ 809.198.1

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԵՎ ՆՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԲԱՌԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

Ս.Ա.Մինասյան

հայոց լեզվի և նրա դաս. մեթ. ամբիոն

Այս հոդվածում նպատակ ունենք համապատասխան բնագրային օրինակներով լուսաբանելու գնարվեստական չափածոյում կիրառված Գրիգոր Նարեկացու անվան դրսևորումների լեզվաոճական արտահայտությունները:

Գրիգոր Նարեկացին իր աստվածատուր շնորհքով, հավատով ու հոգեկարուր բանաստեղծությամբ մի ամբողջ հազարամյակ է, ինչ ոգեղեն դառնորով հիշվում է որպես լուսածիր երևույթ, ուստի հատկանշական է արդի պոեզիայում նրա ամբողջական կամ որևէ հատկանիշի պատկերավոր ու արտահայտիչ ընդգծվելը, որ իշխող ձևն իր մարմնավոր՝ որպես ազգանուն, կիրառությունն է: Այն ունի հետևյալ գրսևորումները.

I.Նարեկացի հատուկ անվան նգակի թվի հոլովված[1] բառաձևերի կիրառություն՝ որպես շարահյուսական՝ նվազագույն միավոր

I.համադրական կառույցով (հիմք + մերջավորություն)՝

ա) ողղական հոլովաձև (ամենատարածվածն է՝ 20-ից ավելի, որոնց մեծ մասը Հովհ. Շիրազի *«Հայոց Դանթեական»*-ում է կիրառված)՝

Եվ *Նարեկացին* Ճիշտ հազարամյա հորս հայրը մեծ,
Դանթեին ասաց՝ «Այս ստեղծ էլի իմ պատից խմեց,
Ինչպես կրմպեին մանուկ օրերս Աստվածաշնչից,
Թե հույսդ թաղես՝ կրնկնես ոչնչից...»-
Եվ *Նարեկացին* էլ ո՞նց չասկար,
Երբ մեր կենս ճտմփին ինչ-որ մի ասկյար
Հոսկ հայ մի կոտրից մի շուխ տենսնելով՝
Վիշտավ հոգմի պես վրա հասնելով՝
Մտավ ու մարեց օջախը մերջին...
Ես ճիչ հանեցի և գլխի առա ամենքս դահճին...
Եվ *Նարեկացին* մոմեր մատյանիս կնքահայր դառավ[1] (1, 98):
Հազար տարի առաջ մեծն *Նարեկացին*
Իր հայացքն ուղղեց միակ Աստծուն,
Հոգու գավը պատմեց՝ խրոխտ, առնացի,
Մի ցավ, որ մեզ հետ է ու չի անցնում...
Անպատասխանն մնաց մեծ Նարեկացին,
Աստված չուզեց, որ որ նա հատնի իրեն...(2. 31):

բ) Սեռական հոլովով (7 կիրառություն, ըստ գործածության հաճախականության՝ երկրորդ տեղն է գրավում)՝

Եվ աստ է ահա,
Որ ոստնեց արտա,
Ու գոռաց ոգին մեծ *Նարեկացու*,
Աստծո մոմեր՝ ընդդեմ Աստծու,-
Ասես խառվեց երկնքից անգամ՝
Տեսնելով դիերն՝ այս արյունաքամ... (1. 279):
Ժամանակի ակունքներից ես գալիս, դու իմ հայ լեզու,
Դու Գողթան կրակված գուսաններից ինձ հասած
Մոխրաթաթախ կանթեղ,
Ժամանակի ժանգը չքանող՝ ոսկեդարի ոսկի,
Դավթի իմաստուն պայծառություն
Եվ Մեհրի իմաստնագույն խառվք,
Նարեկացու տիեզերածավալ ալեկոծում
Եվ Թուչակի վարդաշաղախ սիրերգություն,
Եղիշեից Եղիշե ձգվող անհուն մաքառումի գարավոր սրինգ,
Երդվում ենք (3,114):
գ) Տրական հոլով (3 անգամ)՝
-Հայր իմ,- շրջացի մեծ *Նարեկացուն*,

---

[1] Հայերենում առ այսօր վիճահարույց (5-6-7) հոլովների քերականական կարգի թվի հարցը դիտարկվել է 7 հոլովականությամբ:

Ինչպես վիրավոր որդին Աստծոն...(1. 163):
դ) Հայցական հոլով (2 անգամ)՝
Ազգ, որ մի գիշեր նմանվեց Աստծուն՝
Մնելով անզոյգ իր *Նարեկացուն* (1,121)
ե) բացառական հոլով՝
Եվ լսաքը խլեց մեզ՝ *Նարեկացուց*
Մեծ Խորենացին՝ որպես Աստծուց (1,158)
զ) գործիական հոլով՝
Դու (մայրենի լեզու – Ս.Մ.) մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով/օծված ու յուղված... (4,508):
1.Վերլուծական կառույցով գործածություն (կապն իր խնդրով)՝
ա) *ինչպես* կապն ուղղական հոլովով խնդրի՝ Նարեկացի անվան հետ՝
Դու (քնարական հերոսը Շիրազը-Ս.Մ.) բաց ոչ մեղքերդ *ինչպես Նարեկացին* (5, 101):
բ) *պես* կապը սեռական հոլովով դրված Նարեկացի անվան հետ՝
Նարեկացու, Քուչակի *պես* լուսապսակ ճակատ չկա...(6, 289):
Վշտից բարացած *Նարեկացու պես*...(1, 115):
գ) *դիմաց* կապը սեռական հոլովով դրված Նարեկացի անվան հետ՝
Ասված... Գուցե վարանում էր *Նարեկացու դիմաց* (2, 31):
II.Նարեկացի՝ մանավանդ ազգանունը քերականական զանազան հարաբերություններով է դրսևորվում: Այն նախադասության գլխավոր անդամ ենթակային դերում հանդիսանալի է հանդիպում (մեր ձեռքի տակ եղած 40 օրինակներից 20-ը վերաբերում է դրան):
1. ա) Ենթակա՝ - Օ՜, Դանթե՛,- շրջաց որը *Նարեկացին*,
Էլ ո՞նց հավատամ լուսնի էլ լացին...(1, 51):
բ) Կողմնակի ենթակա՝ Եվ անցնում էինք լու աստղահույլով՝
Մեծ *Նարեկացին* միշտ առաջ ընկած...(1, 44):
2.Ստորոգելի՝ Մեր թե մի նորոգ Նարեկացի, մեր թվում ես ցնդած...(7, 52):
Ես տիեզերք նկարեցի
Եվ կոչեցի ... *Նարեկացի* (7, 52):
3.Հատկացուցիչ (ըստ գործածության հանգամանքների՝ երկրորդ տեղն է գրավում՝ որթ հատ)
Ու ձգվեց ճանչը լու *Նարեկացու*,
Աստծու տնեակ, ընդդեմ Աստծու (1, 211):
Եվ խոսքը կտրեց *Մեծ Նարեկացու*
Մեծ Խորենացին՝ Մասյանն Աստծո...(1, 160):
4.Ոչնչի՝ *Նարեկացու*, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա...(6, 289):
5.Խնդիր՝ ա) ուղիղ խնդիր՝ Ասես փնտրելով իր բաջ գոդքերը...
Նոցա տեղ գտավ *յոկ Նարեկացուն* (1, 20):
բ) Կողմնակի ուղիղ խնդիր՝ Ազգ, որ նմանվեց Աստծուն,
Մնելով անզոյգ իր *Նարեկացուն (1,* 121):
գ) Հանգման խնդիր՝ Թե ամոթ լուսնին մի հայ էլ հասնի՝
Մի կենտ հայից էլ մի ազգ կբուսնի...
Այնպես չէ՞,... ասի հայր *Նարեկացուն* (1, 98):
դ) Կողմնակի միջոցի խնդիր՝
Դու (մայրենի լեզու- Ս. Մ.) մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով,
Նարեկացիով օծված ու յուղված... (4, 508):
6. Պարագա՝ ա) ձևի պարագա՝
Սակայն կենս ճամփին կիսավեր մի վանք
Հայտնվեց որպես անլեզու մի զանգ,
Վշտից բարացած՝ *Նարեկացու պես*՝
Կանգնել էր բլրին մենարված ու հեզ (1, 115):
բ) Տեղի պարագա՝ Գուցե վարանում էր (Աստված- Ս. Մ.) *Նարեկացու դիմաց*.
Վարանում էր, այո, մեր «Նարեկը» վկա (2, 31):
գ) միասնության պարագա՝ Եվ թող հնչե մուեզինը *Նարեկի հետ* իմ անմեռ...(5, 301):
III. Նարեկացի անունը կրող անձնավորությունը քնորոշող հատկանշական բառեր՝
1.ՄԵԾ՝ մակդիրը, որն ընդգծում է միջնադարի այդ անհատականության հանճարեղությունը, բազմահմտությունը, օրինակելիությունը և այլն (տասն անգամ)՝
Խոնարհվեց մի թարթ *մեծ Նարեկացին*...(1, 56):
Բայց խոսքս կտրեց *մեծ Նարեկացին*
Հանելեմելով այն, ինչպես ասի՝ հացին (1, 160):
-Իրավ,- հառաչեց *մեծ Նարեկացին*...(1, 27) և այլն:

2.ԸՄԲՈՍ՝ սխալները, անպատշաճությունները չհանդուրժող, հանգիստ, բայց անողորմ չմնացող հանկարծությունը բռնկուն բառերի զուգադրում Նարեկացուն (այս հատվածների քննությունները ՄԵՐ մանկիկի կիրառությունից հետո նկատելի տեսկ է գրավում՝ վեց գործածություն)՝

Ու գառաց ոգին մեծ *Նարեկացու*...(1, 279),

Երբ խուլ *որոտաց* մեծ *Նարեկացին*... *(*1, 203),

Ու զղոյց հանկարծ, *կերկերեցաց* արտքն հեզ *Նարեկացու*.

-Մի՞թե սրտով է հայոց Աստծու,

Որ հայ չթուլին հայաբարատ երկրում...(1, 164):

3.ՀԱՅՐ, ԿՔԱՀԱՅՐ հոգևոր սնունդ տվող, ուսուցանող, ամեն ինչում սատարող, իր առնչվածությունններով լուսավորող, բարի պատկերային հարևանությամբ կիրառություն (այս ձևը՝ իր գործածության հաճախականությամբ երրորդ տեղն է գրավում)՝

Եվ *Նարեկացին* ճիշտ հազարամյա *հորս հայրը* մեծ...

Եվ *Նարեկացին* մտոնչ մատոյանիս *կիրքահայր* դառավ (1, 98):

Եվ *Նարեկացին* մեզնից մեկին շոյեց *հոր* նման (1, 138):

4. ՍՈՒՐԲ մանկիկի կիրառություն՝ անբասիր հատկանիշների մեծարման համար (այս բառն իր գործածության հաճախականությամբ չորրորդ տեղն է գրավում)՝

Սուրբ Նարեկացին հենակն էր հույսիս... (1, 264):

Հայենն արտասվեց Ռայմոնի նման,

Բեղերն էր կրծում սուրբ Նարեկացին...(1, 287):

5. ՈՂԲ մանկիկը կամ դրանից սերված բայի գործածությունը Նարեկացի տեսվում հետո, որը հայ ժողովրդի զավերն ու մեղքերը գերազանց ձևով գեղարվեստորեն գրի առած ողբերգակի այդ հատկանիշն է ընդգծում՝

-Օ՜, Դանթե,- շրջաց *ողբ Նարեկացի*...(1, 52):

Եվ *Նարեկացին* այժմ մեզ նման

Ողբում էր ինչպես Նարեկիա վանքում (1, 183):

6.ԼՌԻՌ- մանկիկի կիրառություն, որը բնութագրում է շրջապատը շատ և ուշադիր դիտելու, ուսումնասիրելու, անկնդրելու, ոգեկոչ դառնալու, արտաքուստ լռելու, ներքուստ մտորելու հատկանիշներ՝

Ու ձգվեց ձայնը *լռոտ Նարեկացու* (1, 211):

7.ԱՆՑՈՒՅԳ անհասանելի, եզակի, Քրիստոսի նման մանկիկի կիրառություն՝

Ազգ, որ նմանվեց Աստծուն,

Ծնեցավ *անցույց իր Նարեկացուն*...(1, 121):

8.ՀԵԳ մանկիկը, որը հատկանշում է մտքի կանգ շատ մեղքեր, սխալներ, ցավեր տեսած, զգացած և այդ ամենն իր ուսերին առած ու խնդրացած անձնավորությանը՝

-Բայց հայ գուսանները, ինչպե՞ս լռեցիք...

...Երբ խոսքը կցեց , ինչպես ասի հացին,

Երկնից վրդովված *հեգ Նարեկացին*...*(*1, 21):

IV.ՆԱՐԵԿԱՅԻ բառի արմատի կամ նրանից սերված նոր բառերի ուղղակի կամ փոխաբերական իմաստների կիրառություն, որոնք ակնհայտ են դարձնում Գրիգոր Նարեկացի հանրաճանաչ անձնավորության ծանոթ կամ անծանոթ հոգևոր ու աշխարհիկ հատկանիշները՝

Ա.ա) *«Նարեկ»* աղոթագիրքը՝ Նարեկացու ստեղծագործությունների գլուխգործոց *«Մատյան ողբերգության»*, որն իր հոգևոր արժեքով մեծարվել է որպես սուրբ գիրք ու ժողովրդի կողմից ճանաչվել որպես բուժիչ զորություն ունեցող ուժ և փոխանվանական կիրառությամբ Նարեկացուն է բնութագրում (քանակն է այս բառի բայն գործածությունը)՝

Ինչպե՞ս ասեմ,

Որ ասկու կուշտ շարից բացի

Կա շարակա՞ն,

Երկինք տանող խոսքի շարոց,

Ու կա *Նարեկ*...*(*3, 112),

Եվ անցնում էինք ... շուրթս անենքին,

Վառված *Նարեկս* սեղմած իմ կրծքին...(1, 96).

Սիրտսիրուն էր *Նարեկն* հայ խունկի...(1, 33),

Եվ թող ինչ մոնեգինը *Նարեկի* հետ իմ անմեռ (5, 301),

Նարեկն անգիր արին...(2, 31),

Աստված տվեց մեզ երկու սրբություն՝

Նարեկ, Արարատ՝

Որպես հույս, հավատ...

որ քչանալով մենք չփոքրանանք,

որ ապաշխարենք, բայց և սրբությունք:

Աստված մեզ տվեց հավերժի ճամփա՝

Նարեկ, Արարատ...(8) և այլն:

բ) *Նարեկ* բառով շրջասություն՝ *նոր Նարեկ* Շիրազի *«Հայոց Դանթեական»*
Խմորվում էր խոյ *նոր Նարեկ* մի սուրբ՝
Վրնժով անգուսպ...(1, 178):
գ) *Նարեկ* վանքի անվան կիրառություն՝ կապված Նարեկացու գործունեության հետ՝ Եվ
Նարեկացին այժմ մեզ նման
Ողբում էր՝ ինչպես *Նարեկա* վանքում...(1, 183) և այլն:
2.Նարեկացու հետ կապված՝ այդ արմատից սերված նոր բառեր՝ հեղինակային
հարակցումներ՝ ա) ածական մակբայ՝ *նարեկամտունջ* (1. ցասկոտ, 2. ցասից, իր ժողովրդի անվտ
տանջանքից Աստծու դեմ ծառս լինող), *նարեկանման* (մեղմ, թախծոտ, հոգեսփոփ, նվագուն), նարեկյան
(Նարեկացու գրքերին առնչվող)՝
Ասես մեռնում էր պատկերն Աստծո.
Ո՞ր ես՝ մռնչաց *նարեկամտունջ*,-
Այժմ էլ չպիտի գթաս մշտամռունչ... (1,195) ,
...անկարելիից ու հվիրագուրկ դահեիչ ինձ խլեց
քչփչացը
նարեկյան ոիթմով խշշացող ծառերի (9,6),
Օրատորիա*յի նարեկանման* ծփացող մի ծով...
Դիզվում է դանդաղ (4) :
բ) *Նարեկվել* (Նարեկացու տուրբ մատյանի նման գրի առնվել, շարակարգվել)՝
Հայոց դեմ գործվող մեղքն էր *նարեկվում*...(1,178):
V. *Նարեկացի* բառի և այդ արմատով այլ բառի համատեղ գործածություն, որը գրաքննում, ինչպես է
դարձնում Նարեկացու վանք անհատականությունն իր հատակ բովանդակությամբ՝
Եվ *Նարեկացին* վշտից էր ձկվում
Հայոց դեմ գործվող մեղքն էր *նարեկվում*
Աստվածախոով սրտում խռովալ
Աշխարհի խղճի ոգու դեմ սովալ
Խմորվում էր խոյ նոր *Նարեկ* մի սուրբ
Վրնժով անգուսպ...(1,178),
Եվ *Նարեկացու* անմահ ոգու մեջ ասես մեռնում էր պատկերն...Աստծո.
-Ո՞ր ես, -մռնչաց նարեկամռունջ...(1,195),
Եվ *Նարեկացին* այժմ մեզ նման
Ողբում էր, ինչպես *նա Նարեկա* վանքում...(1,183),
Գուցե վարանում էր *Նարեկացու* դիմաց
Վարանում էր, այո, մեր Նարեկը վիա (2,31):

Ամփոփում

Միջնադարյան նշանավոր բանաստեղծի *Նարեկացի* մականվան ու նրան առնչվող բառերի
լեզվական և ոճական կիրառությունները ստրի չափածոյում ունեն տարբեր և լայն կիրառություններ:

Резюме

В армянской поэзии имя всемирно известного средневекового поэта Григора Нарекаци
употребляется в разных языковых и стилистических формах.

Գրանցագրություններ

1. Հովհ. Շիրազ, Հայոց դանթեական, Եր., 1990թ.:
2. Ս. Խանյան, Արցախյան ողբանչներ, Եր., 1991թ.:
3. Ս. Կարապետիկյան, Երկեր, հ.1, Եր., 1984թ.:
4. Պ. Սևակ, Երկեր, հ.1, Եր., 1972թ.:
5. Հովհ. Շիրազ, Երկեր, հ.2, Եր., 1982թ.:
6. Ե. Չարենց, Եր., 1984թ.:
7. Ա. Սահակյան, Միրելի ուսուցիչ, Եր.,1987թ.:
8. Հ. Դարյան, Գրական թերթ, բանաստեղծություններ, Եր.,26.09.03:
9. Վ. Հակոբյան, Թռնելի հեռուն, Եր., 2003թ.: